


8974

5997

~~5861~~

~~2803~~






Մ Ե Ծ Ը

4783



Արևիկան աւանդութիւն



ՓՈՒԱՂԻՆՅ Ա. Ա.



1893

Տպարան Եւզու Հայոց Հոգևոր Տեսչութեան:



Дозволено цензурою 26 Мая 1893 г., г. Тифлисъ



Հին ժամանակները Մօսկւ քաղաքում ապրում էր բոլորին սերելի Մահմէդ Ալի ծերունին: Նա շատ հարուստ էր, աշխարհքիս բոլոր երկրների հետ առեւտուր ուներ: Մարդիկ նրա մասին զովասանքով էին խօսում: Նա հիւրասէր ու հացով մարդ էր, նրա շքեղ պալատը բաց էր ամեն մի ճանապարհորդի առաջ, ով որ էլ որ լինէր նա: Մահմէդ Ալիի ասնը, ով էլ որ պատահէր, թէ հարուստը և աղքատը, թէ պանդուխտը և թէ երկրացին, հաւասարապէս տեղ ունէին էին: Պատահած հիւրին առաջնորդում էին դէպի շքեղ զարդարած սենեակները և ամեն բանում նրան ծառայում էին. նրա համար պատրաստ էին թէ բաղանիքը և ուտելիքը և թէ զիշերելու տեղը:

Շատ անգամ ծանր և խառնաշփոթ ժամանակներում, (սալիֆան\*) հրաւիրում էր Մահմէդ Ալիին

\*) Խալիֆա նշանակում է երկրի կառավարիչ: Այն ժամանակները Ասիայում (որտեղ են այժմ Հայաստանը, Փոքր Ասիան և այժմեան Պարսկաստանը) կային մի քանի փոքրիկ պետութիւններ, որոնց կառավարում էին խալիֆաները:



խորհրդի, և ծերունին միշտ նպտտակայարմար  
 և օգտաւէտ խորհուրդներ էր տալիս: Մօտուլի  
 ժողովուրդը այնպէս էր յարգում նրա խօսքը,  
 որ նեղ տեղն ընկած ժամանակ գալիս էր և ինդ-  
 քում էր նրանից վճիռ դնել իրանց վէճերին և բո-  
 ղոքներին: Միմեանց թշնամի կողմերին Մահմէդ  
 Ալին միշտ աշխատում էր հաշտեցնել, իսկ պատի-  
 ւը վերաւորուածներին ջերմ կերպով պաշտպանում  
 էր. նրա վճիռը վճիռ էր և արդար: Իր ծերութեան  
 օրերում Մահմէդ Ալին գրաւել էր դէպի ինքը մի  
 քանի անկեղծ բարեկամներ, որոնք շատ անգամ  
 օգուտ էին քաղել նրա խորհուրդներին ականջ դը-  
 նելով և վայելել էին նրա տուած բարիքները:

Բայց ծերունին խոնարհ մարդ էր և չէր պար-  
 ծենում մարդկանց առաջ ոչ իր արած բարերա-  
 թութիւններով և ոչ իրեն տուած բարձր պատիւ-  
 ներով, համարելով այդ բոլորը, ինչ որ ունէր, Ալլա-  
 հի ողորմութիւն:

Մահմէդ Ալիի ամենամեծ ուրախութիւնը և  
 գլխաւոր նեցուկը իր երկու որդիքն էին: Այն ժա-  
 մանակները, երբ նրանք մեծացել, հասակ էին առել,  
 Մահմէդ Ալին ծերացել էր, մազերը սպիտակել, իսկ  
 նրանց մայրը վաղուց էր վախճանուել:

Մեծ որդին, Զաֆարը, բարձրահասակ և վայելուչ  
 մի երիտասարդ էր: Նրա հայեացքը անվախ և կտր-  
 րուկ էր: Մարմինը պնդակազմ և առողջ էր, իսկ

հոգին վառվառն ու անվրդով: Մանկութիւնից նա  
 ձգտում էր քաջութիւններ ցոյց տալ, փառք վաս-  
 տակել, անսովոր բաների ետեւից հասնել: Ծիգ էր  
 անում ամենայն տեղ, թէ ուսման և թէ խաղերի  
 մէջ առաջինը լինել իր ընկերների մէջ: )

Փոքր որդին, Նուրէդդինը, երգիչ էր, հեզ և մտա-  
 ծող բնաւորութեամբ: Նրա հօգու քնքութիւնը և  
 բարութիւնը յայտնի էին Մօտուլի բոլոր աղքատնե-  
 րին ու մանուկներին: Մեծ եղբայրը սիրում էր զէնք,  
 շքեղութիւն, ուրախութիւն և իր գլուխը վաանգ-  
 ների ենթարկել, իսկ Նուրէդդինը սիրում էր ասա-  
 դալից գիշերը, լուսնի տակ հանդարտ հոսող դետա-  
 կը և արշալուսին թռչունների երգը: Գիշերները  
 ժամերով նա նստում էր իրենց տան կարին, մտած-  
 մունքների մէջ էր ընկնում կամ երգում էր բընու-  
 թեան հրաշալիքների և Աստուծոյ զեհութեան  
 մասին:

Մարգիկ խօսում էին այդ երկու եղբայրների մա-  
 սին և ասում էին թէ մեծը նման է պայծառ և  
 կրակոտ արեգակին, իսկ փոքրը — հանդարտ ու  
 պարզ լուսնեակին, և դժուարանում էին վճռելու,  
 թէ երկու եղբայրներից որն է աւելի արժանաւորը  
 և շնորհալին: Իսկ նրանց ծերունի հայրը իր երկու  
 որդկերանց հաւասարապէս էր սիրում և ուրախու-  
 թեամբ ու սրտի բերկրանօք տեսնում էր, թէ ինչ-  
 պէս նրանք մեծանում և զարգանում էին:



— Ես կամենում եմ մեծ մարդ գտնուիլ, շտտ անգամ ասում էր Զաֆարը Հօրը և նրա դէմքը գոռազարար արտայայտում էր իր ուժեղ և աներկիւղ լինելը, իսկ աչքերը փայլում էին, կարծես թէ իր առաջ տեսնում էր մի ինչ որ վսեմ ու զրաւիչ բան:

— Իս հեշա բան չէ, սրգիս, հանդարտ ձայնով պատասխանում էր Հայրը, շոյելով նրա զանգուր մագերը. դժուար է ըմբռնել ճշմարիտ մեծութիւնը և հասնել նրան:

— Ես կամենում եմ բարի լինել, ասում էր մանուկ հասակում Նուրէղգիները, մտածմունքի մէջ նայելով դէպի փողոցը:

Սյնտեղ, շոգ օրերին, փոշու մէջ ծածկուած գնում էին ստրուկները զլսարաց, ծանր քայլերով, բեռնած էշերի և ուղտերի հետ միասին. անցնում էին ծառաները իրենց տիրոջ յանձնարարութիւնները շտտապով կատարելու, շուտափոյթ վագում էին աղքատ կանայք չաղրանները շուռ կարած իրանց երեխաների և ամուսինների ազրուսար Հայթհայթելու. մի ուրիշ տեղ, հեռու, մի մուրացկան մանուկ, բոլբոլփին պատառոտուած և կեղտոտ, քարշ էր գալիս փոշտ փողոցի միջով մի շուռք անկիւն որոնելու արևի կիզող ճառագայթներից աղատուելու համար: Եւ Նուրէղգիները, նայելով փողոցին, ակամայ մտածում էր, թէ ինչպէս իրեն համար լաւ է և հով հօրը պալատում նստած և ամեն կարգ ու սարքով

չըջապատուած, իսկ այնտեղ, փողոցում, մարդիկ առանց հանգստանալու հագում են իրենց ազրուսար, իսկ ոմանք, ինչպէս այդ զգգոլուած մանուկը, չը զիտեն թէ շոգի ու ծարաւի ձեռքից ուր փախչեն: Նուրէղգիները այս բոլորը տեսնելով, աչքերը արտասուքով լցուած նայում էր Հօրը, Հայրը հասկանում էր նրա միտքը լուութեամբ, նրա գլուխը շոյում էր և ծառային ուղարկում էր մուրացկան մանուկի հակեց: Մառան հրաւիրում էր նրան հանգստանալու Նուրէղգիների հօր հիւրնկալ կտուրի տակ: Մուրացկանին հաց և հագուստ էին տալիս, խրախուսում էին նրան խօսքերով և նա այդ տեղից ուրախացած, սիրտ առած, երկինքը օրհնելով դուրս էր գալիս:

Մի քանի ժամանակից յետոյ, երբ Նուրէղգիները հասակ առաւ և կարող էր ազատ կերպով մի պարապմունք ընարել իր համար, որը իր սիրտը ցանկանար, շտտ անգամ անիցը դուրս էր գալիս, տանեցիներից ոչ ոքին բան չասելով:

Սյդ մասին զիտէին միայն մուրացկանները, անաւր և հիւանդ մարդիկը: Նա օգնում էր նրանց ինչով և ինչպէս կարող էր:

Շտտ անգամ տեսնում էին բնակիչները, թէ ինչպէս նա տուն էր վերադառնում բերելով իր հետ մի որ և է աղքատի կամ հիւանդի և նրա առաջ ուրախ կերպով աղաչակելով վագվում էին երեխաները



և շրջապատած բերում էին տուն: Տուն բերելով իր հիւրին, Նուրէզդինը խնամքով նրան կերակրում էր, յետոյ դուրս էր գալիս մանուկների մօտ, խնդրում էր մի առանձին անկիւն և նստում էր գետնի վրայ: Մանուկները շրջապատում էին նրան, իսկ նա ըսկտում էր պատմել նրանց հրաշալի հէքիաթներ, նրանց հետ միասին երգեր էր երգում և աղօթում էր: Զաֆարը շատ անգամ զարմանում էր, թէ ինչպէս իր եղբօրը ուրախութիւն էին պատճառում այդ զբաղմունքները: Այդպէս մեծանում էին եղբայրները: Թէ և նրանք նման չէին միմեանց ոչ բնաւորութիւններով և ոչ ձգտումներով, սակայն նրանք շատ սիրով էին և սրտով կապուած էին միմեանց հետ:

Զաֆարը 20 տարեկան էր դառել: Նա մտմտում էր, թէ ինչ մեծ և փառաւոր գործնէութիւն է սպասում իրան: Նա կրթուած, տաղանդաւոր, զարմանալի ուժեղ և ճարպիկ էր. նրանից լաւ հեծնող և ձգող էլ նմանը չը կար ամբողջ Մօսուլում:

— Ինձ հարկաւոր է փառք, մեծութիւն, շննջում էր կրակոտ երիտասարդը: Խալիֆան պատերազմ էր սկսել զրացի տէրութեան հետ: Երկու կողմերն էլ կռւում էին կատաղի կերպով: Խալիֆայի ամենալաւ զօրապետները կռուի մէջ սպանուել էին և զօրքը սկսել էր յաղթուել: Զաֆարը վճռեց, որ արդէն հասել է ժամանակը փառք ու պարծանքի տիրանալու

և նա խնդրեց հօրը թող տալու իրան կռուի դաշտը գնալու:

— Փառքով և մեծութիւնով կը դառնամ քեզ մօտ, հայր իմ, ասում էր Զաֆարը հրաժեշտի ողջօյնը տալիս:

Մերունին լուռ և տխրած ճանապարհ գրեց որդուն:

Անցաւ մի տարի, յետոյ երկրորդը, երրորդը: Պատերազմը վերջապէս վերջացաւ: Այդքան ժամանակուայ ընթացքում երիտասարդ Զաֆարը շուտով նշանաւոր հանդիսացաւ իր հնարադէտ և համարձակ յաղթութիւններով և վերջապէս նշանակուեցաւ զօրապետ: Նա բոլորովին ջարդեց թշնամու զօրքերը, մի քանի քաղաքներ նուաճեց և շատերին գերի արաւ: Իր արած յաղթութիւնների շնորհիւ խալիֆայի տէրութեան սահմանները ընդարձակուեցան և նուաճած քաղաքները ստիպուած էին հարկ տալու խալիֆային:

Եւ ահա Մօսուլը մեծ տօն պիտի կատարէր. քաղաքը պատրաստուում էր շքեղ հանդէս կատարելու համար: Մեծ և փառքի տիրացած զօրապետը վերադառնալով կռուից զօրքերի և գերիների հետ միասին, պէտք է պատուով և հանդիսով անցնէր իր հայրենի քաղաքի միջով: Սմբոխը հաւաքուել էր քաղաքի գոյների մօտ: Ճանապարհի վրայ տարածել էին զորքեր և ցանել էին ծաղիկներ, որտեղով պէտք



է անցնէր քաղաքի փառք, երկրի պարծանք, խալի-  
Ֆայի սիրելի Ջաֆարը: Ծեր և մանուկ, կին և երե-  
տասարդ, ամենքը անհամբեր, ուրախ ուրախ սպա-  
սում էին օրուայ Հերոսին աչքերը անկած դէպի  
Հեռուն:

Ահա երևաց դանդաղաշարժ մօտեցող բանակը:  
Ամենքի առաջին սպիտակ ձին հեծած զալիս էր  
Ջաֆարը: Ամբոխը իրարով անցաւ, հազարաւոր հե-  
տաքրքրի աչքեր յառել էին նրա վրայ և հիացման  
ձայներով ու աղաղակներով ողջունում էին նրան և  
անց էին կայնում բոլոր փողոցներով: Նրա ետևից  
տանում էին շղթայակապ գերիներին, զօրքերով շըր-  
ջապատուած:

Ծերունի Մահմէդ Ալին չէր գուրս եկել հանդի-  
պելու իր որդուն, այլ սպասում էր նրան իր տան  
գաւթում փոքր որդու ուսին յենուած: Նուրէրգինը  
ուրախական ցոյցեր էր անում, իսկ ծերունին հան-  
դիստ էր և անտարբեր:

Փօռենապով իր հօր տանը, Ջաֆարը կանգնեցրեց  
ձին, ցատկեց դեպի և սրտաշարժ ուրախ դէմ-  
քով մօտեցաւ հօրը: Ամենքը լուռ էին: Ներսը մին-  
չև դեպի ողջունեց հօրը և երբ ծերունին նրան  
բարձրացրեց և զրկեց, Ջաֆարը հանդարտ ձայնով  
հարցրեց.

- Հայր իմ, այժմ մեծ չե՞մ:
- Ոչ, որդեակ, հազիւ լսելի ձայնով պատասխա-

նեց ծերունին:  
Ոչ որ չը լսեց այդ խօսքերը, բայց ամենքը տե-  
սան, թէ ինչպէս նրա դէմքը մրոպլուեց, աչքերը  
արտասուքով լցուեցան, որի անվախ հայեացքից  
փախչում էին թշնամիները, ամենքը տեսան, թէ  
ինչպէս զլուխը քաշ զցած, զնաց ձիու վրայ նստեց,  
շարունակեց իր ճանապարհը տիրադէմ և մտած-  
մունքի տակ ընկած: Նրան այլ ևս չէին ուրախաց-  
նում ոչ ամբօխի համակրական ցոյցերը, ոչ փողոց-  
ների վրայ ցանած ծաղիկները և ոչ նրա ոտների  
տակ թափուած փունջերը:

Շուտով լուր տարածուեցաւ, որ մեծ զօրապետը,  
տէրութեան նեցուկը, անյայտացել է:

Գ.

Մի քանի տարի անցնելուց յետոյ արևելքի մեծ  
տէրութիւններից մէկի մէջ յայտնուեցաւ մի երի-  
տասարդ զիանական, որի հռչակը ամեն տեղ տարա-  
ծուել էր: Ամենայն տեղ խօսում էին, թէ նա ինչ-  
պիսի հրաշքով բժշկել է թագաւորի ծանր հիւան-  
ութիւնը: Պատմում էին, թէ թագաւորը առողջա-  
նալուց յետոյ առաջարկել է նրան, ինչ որ իր սիրտը  
ցանկանում է: Երիտասարդ զիանականը ինչպէս  
չնորհել իրեն աւագոտ անապատի մէջ մի կտոր դե-  
տին և զանելով անապատը ջրելու և պարարտաց-



ներու նոր միջոց, կարճ ժամանակու՛մ անապատի այն կտորը դարձաւ մի ծաղկապարզ այգի և շնորհեց տէրութեանը: Անապատի անմարդաբնակ վայրերը այդպիսով այժմ կարող էին շէնանալ: Իրանից երկիրը մեծացաւ և հարստացաւ, բոլոր ժողովուրդը փառաբանում էր երիտասարդ զինական Զաֆարին: Համարելով նրան բնութեան բոլոր գաղանիքների իմացողը: Բայց ոչ ոք չը դիտէր, թէ ո՞վ է նա, ի՞նչ ազգից է, և ամենքը հաւատացած էին, թէ նա երկնքից է ուղարկուած:

Մի անգամ ամառային մի խաղաղ երեկոյ անպաճոյճ հագնուած մի երիտասարդ մարդ մտաւ ծոուլքաղաքը և հասնելով Մահմէդ Ալիի պալատի ճուղուքը սկսեց զարկել երբ որ ծառան բաց արաւ, ա իր գէմքը վերարկուով ծածկեց և խնդրեց րեն տանել տան տիրոջ մօտ: Ծառան սկզբում չէր ստահանում ներս թողնել խորհրդաւոր անծանօթին, առարկելով, որ իր աէրը հանգստանում է, այց վերջապէս զիջեց նրա թախանձանքներին, ասարաւ անծանօթին տիրոջ ննջարանը: Երայած Մահմէդ Ալին կիսապառկած սուրճ էր մտնում: Անծանօթը համեստ կերպով կանգնեց դռան առջև և սովորական ողջոյնը տուեց: Նրա ձայնը լսելն պէս ծերունին վեր թռաւ տեղից.

— Զաֆար, դու ե՛ս:

— Ես եմ, պատասխանեց Զաֆարը:

— Որտե՞ղ էիր մինչև այժմ, ասաց հայրը ընկնելով նրա առաջը:

— Ես փառք էի որոնում և ահա նրան գտայ: Ասա՛ ինձ, լսել էս երբ և իցէ այն հօշակաւոր բժշկի մասին, որը առողջացրել է թագաւորին: Լսել էս դու այն մեծ գիտնականի մասին, որը մերկ անապատը պտղաբեր է դարձրել: Այն մարդը ես էի: Այժմ ես եկել եմ քեզ մօտ ոչ իբրև աշխարհ կործանող և սրով փչացնող, այլ խաղաղութեան հրեշտակի թևերով: Բոլոր ազգերը թէ մեր և թէ օտար, փառաբանում են իմ անունը: Ասա ինձ, խոստովանում ես այժմ իմ մեծ լինելը: Մերունին ախար գէմքով նայեց նրա վրայ և կամաց, բայց հաստատ ձայնով պատասխանեց.

— Ոչ:

— Իարձեալ ոչ, ասաց որդին հօր պատասխանից սիրտը կտրատուած և ծանր ախ քաշելով ողջունեց հօրը, դուրս եկաւ տանից և նորից հեռացաւ հայրենի քաղաքից:

Դ.

Անցաւ էլի մի քանի տարի: Արևելքի բոլոր քաղաքներում ժողովուրդը հիացած կարդում էր նոր հանդէս եկած մի նշանաւոր գրողի երևելի բանաստեղծութիւնները: Նախկին գրողների փառքը նրա



առաջ կորել էր, ինչպէս արեգակի երևալուց կորչում են աստղերը: Նրա ոտանաւորները կարգում էին ամեն տեղ, թէ ծերերը և թէ երիտասարդները երկինք էին բարձրացնում Ջաֆարի անունը: Նրա անունը հասել էր մինչև իր հայրենի քաղաքը: Սօսուլի խալիֆան տեղեկանալով այդ մասին, հրամայեց զանել նրան և հրաւիրել պալատական բանաստեղծի պաշտօնով: Բայց Ջաֆարը անյայտութեան մէջ ծածկուած էր մնում: Բայի նրա անունից, ոչ ոք նրա մասին ոչինչ տեղեկութիւն չէր իմանում:

Մի անգամ վաղ առաւօտեան, Մահմէդ Ալիի պալատին մօտեցաւ մի փոշոտուած, յոգնած մարդ, պարկը ուսին: Չը նայելով նրա աղքատիկ հագուստին և մրտտուած դէմքին, ծառաները ճանաչեցին որ դա Ջաֆարն է: Ուրախութեան աղաղակներով վազեցին և տարան հօր մօտ: Հայրը այդ ժամանակ կատարում էր իր առաւօտեան աղօթքը: Նրա մէջքը կռացել էր ծերութիւնից և կնձիւնները ծածկել էին նրա դէմքը: Բայց իր խելօք և բարի հասցեացքով, իր առաջուայ ունեցած սիրով դիմեց իր որդուն աղօթքից յետոյ: Մերունին ուզում էր գրկել նրան, բայց որդին ծունկ չըքելով նրա առաջ զգացուած ձայնով հարցրեց.

— Ահա ես դարձեալ եկել եմ քեզ մօտ, հայր իմ, բանաստեղծութիւններս կարդացողը հոգեպէս մխիթարւում և հիանում է իմ ա-

նունս յաւիտեան անմահացած է, իմ զրաճներս չեն մեռնիր, չեն անհետանալ մարդկանց մտքերից և կը կարդան, ինչպէս այժմ են կարդում: Ասա ինձ, դ՞ու էլ ես խոստովանում իմ մեծութիւնը:

Մերունին բարձրացրեց նրան գեանից և պինդ գրկելով հանդարտ շըշընջաց.

— Խղճում եմ քեզ, որդի, բայց դու դեռ ևս չես հասել իսկական մեծութեան: Բայց ես կը զանեմ նրան, ասաց Ջաֆարը:

— Ետեիցն էլ վազես, դարձեալ չես հասնիլ նրան, նկատեց հայրը:

Կրուխը շարժելով Ջաֆարը դուրս եկաւ տանից և դարձեալ հեռացաւ իր հայրենի քաղաքից:

Անցաւ հինգ տարի: Մի լուսնկայ խաղաղ գիշեր Մահմէդ Ալին դուրս էր եկել իր տան կտուրը՝ մաքուր օդ ծծելու: Նա մտածմունքի մէջ ընկած նայում էր աստեղադարձ երկինքին: Ցած նայելով նա յանկարծ նկատեց մի ինչ որ մարդու շուքը, որ ման էր գալիս պալատի պատերի տակ և երևում էր, որ սիրտ չէր անում դուռը ծեծելու: Նրա ոտները բորիկ էին, գլուխը բաց և շորերը պատառոտուած: Մահմէդ Ալին իր մէջ որոշեց, որ դա մի թափառական գերվիշ է: Մերունին կռացաւ դէպի ցած և կանչեց. պուռը համարձակ ծեծիր, դերվիշ իմ տունը բաց է բոլոր օտարականներէ առաջ, թէ ցե-

15  
15





րեկը և թէ գիշերը Դերվիշը այդ ձայնը լսելով գող-  
 գողաց և պատի տակից վեր թռաւ, աչքերը բարձ-  
 րացրեց զէպի վեր՝ խօսողին նկատելու: Կուսինը  
 լուսաւորել էր նրա մաշուած և յողնած դէմքը:  
 Սերունին անողելով նրան իր թոյլ աչքե-  
 րով, ճանաչեց որ իր որդին է, չը նայած որ վեր-  
 ջինիս երեսը ծերացած և չափազանց մաշուած էր:  
 — Զաճար, որդիս:

— Տայր իմ, լուսեց ներքեից և հեկեկանքը կտրեց  
 Զաճարի ձայնը: — Տայր, տես, աշխարհիս ամեն բա-  
 ներից ձեռք եմ քաշել: Տարստութիւն, պատիւ, փառք,  
 բողբոլը ունայնութիւն է, ես այդ հասկացել եմ: Եւ  
 ես ահա քաշուել եմ անապատը և գլուխս ու  
 անձս միայն յանձնել եմ Աստծուն: Ծանր պաս եմ  
 պահում, անըւռ աղօթում եմ, դառն գրկանքների  
 մատնած իմ անձը՝ հաւատում եմ Աստծուն և  
 միայն նրանից եմ սպասում իմ փառքի պսակը: Ես  
 հրաժարուել եմ աշխարհային պատիւներից, իմանա-  
 րով որ այդ բողբոլը դատարկ է, ահա ինձ ամենքը  
 բոլորք են անուանում և ամեն երկրներից աշակերտ-  
 ներ են հաւաքուում ինձ մօտ: Բայց այս ամենը ինձ  
 է ուրախացնում: միայն ես հաւատում եմ քո վրձ-  
 րին: Ասա, Տայր իմ, այժմ ես քեզ հասկացել եմ,  
 հասել եմ արդեօք իսկական մեծութեան:

Զաճարը լսեց, սրտատրոփ սպասում էր հօր  
 պատասխանին, ծերունին լուռ և տխուր նայեց


1768

նրան և վերջապէս ասաց.  
 — Ինչի՞դ է պէտք իմ հաւանութիւնը, որդեակ:  
 Քո խղճմաննքը քեզ ասում է որ դու դեռ ևս չես  
 գտել իսկական մեծութեան ճանապարհը, որովհետեւ  
 քո մէջ դեռ գորեղ է հպարտութեան և ինքնասի-  
 րութեան հողին:

Աշխարհը գլխին շուռ եկաւ, երբ Զաճարը լսեց  
 հօր պատասխանը: Նա յենուեց պատին և խորհե-  
 րով հեկեկաց: Սերունին շտապեց կտրից ցան իջ-  
 նելու, որ որդուն տուն բերէ, բայց երբ դուրս ե-  
 կաւ փողոցը, Զաճարը այլ ևս չէր երեւում:

Ե.

Շուտով երկիրը սարսափի մէջ ընկաւ: Նորից  
 կատաղի կռիւ ծաղեց հարեան խալիֆայի հետ:  
 Նա աւիթ էր որսնում յետ վերցնել Զաճարի խլած  
 քաղաքները: Այս անգամ Վօսուլի զօրքերը չը կա-  
 րողացան դիմադրել կատաղի թշնամուն, կռուի ժա-  
 մանակ նրանք յաղթուեցան և փախան Վօսուլը  
 ուրիշ քաղաքների հետ նուաձեց և կողոպտեց թշ-  
 նամին Ամենից շատ փնաս կրեց Մահմէդ Ալին, թշ-  
 նամին նրանից վրէժ հանեց, իբրև իրենց թշնամի  
 Զաճարի հօրից: Վօսուլում չը գտնելով Զաճարին  
 նա կողոպտեց և քանդեց բողբոլը, ինչ որ  
 ունէր Մահմէդ Ալին: Զը կար այլ ևս դարերի ըն-





Թացքում հաւաքուած զանձր. չը կային այլ ևս ծառաները. մի քանիսին սպանել էին, միւսներին գերի էին արել: Բայց ամենից աւելի ծանր և անսամեղի էր ծերունու համար իր քնքոյշ Նուրէդդինի գերի ասնելը: Նրան շղթայակապ, դուռը վերաւորուած գերի էին տանում: Նազարաւոր ամբողջ դառն արտասուքով և աղօթելով հեռուում էր Նուրէդդինին, իսկ նա զնում էր հանգիստ և համեստ, գրուելը քաշ դրած, աչքերը արտասուքով լիքը. ախուր նայում էր իւր հայրենի քաղաքին և իւր Թանգազին բարեկամներին:

Մահմէդ Ալին չէր ափսոսում ոչ իր կորցրած հարստութեան և ոչ էլ իր առաջուայ վարած փարթամ կեանքի վրայ: Նրա սիրտը կարատուում էր, երբ մտածում էր Նուրէդդինի մասին և տեսնում էր նրա անմխիթար կեոյ գրութիւնը: Սրտի դառնութիւնից և արտասուք Թափելուց ծերունու տեսողութիւնը սկսեց հեռզհեռէ թուլանալ և շուտով նա բոլորովին կուրացաւ . . .

Բայց չը նայելով որ Մահմէդ Ալին մեծ զրկանքներ ինթարկուեց, իր աչքերից զրկուեց, սակայն առաջուայ նման օգտակար էր մարդկանց համար. նա մոռանում էր իր անձնական ցաւերն ու դառնութիւնները, երբ ուրիշին տեսնում էր դժբախտութեան մէջ ընկած: Երբ նա անցնում էր հրապարակով իր հարսի առաջնորդութեամբ, մարդիկ ուրախու-

Թեամբ նրա առաջ էին դուրս դալին և հրաւերում էին նստելու իրանց մօտ և հանգստանալու: Շատերը հէնց այդտեղ դիմում էին նրանից խորհուրդ հարցնելու կամ նրանց մխիթարելու և նա ամենայն սիրով կատարում էր նրանց ասածները, ինչով որ կարողանում էր:

Նա բոլոր աղքատների բարեկամը դարձաւ, որոնք մխիթարութիւն և օգնութիւն էին զանում Նուրէդդինի մօտ: Նրանց հետ միասին նա սիրում էր ժամաճակ անցկացնել, հաճութեամբ լսում էր, թէ ինչպէս նրանք արտասուքով յիշում էին Նուրէդդինին և պատմում էին անդապար նրա դէպի իրենց ունեցած սիրոյ և ողորմածութեան մասին: Մահմէդ Ալիի հարուստ և հին բարեկամներից մի քանիսը շատ անգամ առաջարկում էին նրան ոչ միայն պատրաստի բնակարան, այլ և փող իր առևտուրը վերականգնելու համար: Բայց Մահմէդ Ալին հանգիստ և վճռական ձայնով միշտ մերժում էր նրանց առաջարկութիւնները:

Ամենքը զարմանում էին, թէ ինչպիսի քաջութեամբ և համբերութեամբ տանում էր իր ծանր դրութիւնը, բայց ոչ ոք չէր իմանում, թէ ինչպէս խղճուկ ծերունին զիշերները նստած իր տան կտուրին, հեծում էր և խորը հաւաչելով կրկնում էր. «ա՛խ, որդի՛քս, որդի՛քս»:





Զ.

Միայն մի մարդ կար, որ ծածուկ լուծ էր ծերունու այդ աղեկըտոր խօսքերը: Այդ մարդը Ջաֆարն էր, որ նորից դարձել էր անապատից: Նա երկար թափառում էր մեծութեան համեմու ճանապարհը գրանելու համար: Նա մտաւորապէս և Ֆիզիքապէս թուլացաւ և իրեն համարելով արդէն անպէտքացած որ և իցէ գործ կատարելու, յուսահատուեց և մտածում էր ինքնասպանութիւն գործել: Նա ճանապարհ ընկաւ դէպի Մօսուլ վերջին անգամ տեսնելու իր հօրը և եղբորը և մնաք բարև ասելու: Յանկարծ Մօսուլի ճանապարհին, նա իմացաւ շրջակայ գիւղերի բնակիչներից Մօսուլի, իր հօր և եղբօր գլխին եկած ծանր և թշուառ պատահարի մասին: Այս լուրը Ջաֆարի սիրտը կրտոր կրտոր արեց: Նա համոզուեց, որ իր փառքի ետեից ընկնիլը պատճառ եղաւ իր հօր այդպիսի թշուառութեանմէջ ձգելուն:

Ջաֆարը հասաւ իր հայրենի քաղաքը, երբ մութը պատել էր դեանին: Ծանր էր նրան տեսնել իր հայրական պալատի աւերակները և նա տխրած սկսեց մանգալ քաղաքի գատարկ փողոցներով: Դէս ու դէն մանգալով, նա տեսաւ մի փոքրիկ տան

կտուրի վրայ մէջքից կուսցած մի ծերունի: Ծերունին նստած էր, ծնկները զրկած իր չորացած ձեռքերով և տիրութեամբ օրօրուում էր մի կողմից դէպի միւսը: Ջաֆարի ականջին հասան «իմ որդիքս, որդիքս» հառաչական խօսքերը:

Ջաֆարը սրտատրոփ սկսեց նայել լուսնի լուսով զարդարուած կոյր ծերունու դէմքին և ճանաչեց իր հօր պատկերը. նա արդէն կամենում էր կանչել նրան, բայց յանկարծ տեսաւ, որ կտուրը բարձրացաւ մի երիտասարդ կին. դա իր եղբօր կինն էր: Նա չոքեց ծերունու մօտ և զրուիք դնելով նրա ուսին ծանր կերպով հառաչեց: Ծերունին խոնարհ կերպով սկսեց շոյել նրա զրուիք և կամաց ձայնով մի ինչ որ բան էր խօսում: Ջաֆարը լսեց վերջին խօսքերը— «Ես մեծ յոյս ունիմ, որ իմ որդի Ջաֆարը կը վերադառնայ մեզ մօտ և մենք այն ժամանակ մենակ չենք լինի»:

Բայց Ալֆայիմը, Նուրէզգիլիէի կինը, յուսահատ զրուիք շարժեց և ասաց.— Ջաֆարը չէ կարող Նուրէզգիլի տեղը տալ. նա ինձ համար օտար է, ես նրան բոլորովին չեմ ճանաչում: Նա չէ էլ ծնուած ընտանեկան կեանքի համար, նա սիրում է միայն իր անձը և փառքի ետեից է ընկած,

— Այդ ճշմարիտ է, Ալֆայիմ, տխուր ձայնով ասաց ծերունին,—բայց դու չը դիտես թէ նա ինչպիսի բզնիւ սիրա ունի: Եթէ նա միայն իմանար



մեր գլխին եկած անբախտութիւնը, նա միանգամայն կանէր այն ամենը, ինչ որ կարող է, որպէս զի մեզ օգնէ:

Բայց Արֆայիմը սիրան այրուած ասաց.

— Ես երբէք չեմ ներիլ Զաֆարին, նա է մեր անբախտութեան պատճառը: Եթէ Զաֆարը չը լինէր, Նուրէդդինը գերութեան մէջ չէր լինիլ:

Զաֆարը այլ ևս չը կարողացաւ սկանջ գնել: Ամեն մի խօսքը դանակի պէս կտրոււմ էր նրա սիրտը: Հեկեկանքը նրա կուրծքը ճնշեց և նա իր գլուխը ձեռքերի մէջ առնելով՝ սկսեց փախչել:

Նա կանգնեց միայն այն ժամանակ, երբ քաղաքից արդէն դուրս էր եկիլը այստեղ ճակատք նա սկսեց դառն արտասուք թափել, աղաչել Աստուծուն, որ իր զրոյշալը բնդունէ և սովորեցնէ իր ինչ անելը: Մտածմունքներով և աղօթքներով անցկացրեց ամբողջ գիշերը և առաւօտեան արդէն իրեն յայտնի էր, թէ ինչ պէտք է անել:

Մինչև գետին սղջունելով իր հայրենի քաղաքին Զաֆարը առանց ժամանակ կորցնելու ձանապարհ ընկաւ գիւղից-գիւղ քաղաքից-քաղաք, մուրաբով կերակրուելով և հարցնելով իր եղբօր գերի տարած թշնամու մայրաքաղաքի ձանապարհը:

Ը.

Վերջապէս հասաւ թշնամու քաղաքը: Նա յիշեց, թէ ինչպէս մի ժամանակ մտել էր այստեղ հանդիսաւոր յաղթանակով, իսկ այժմ մտնում է իբրև մուրացկան, շորերը պատառոտած:

Երբ որ հասաւ երկրի կառավարչի պալատը, նա սկսեց խնդրել, որ թող տան իրեն ատենելու Խալիֆային և իր խնդիրքն առաջարկելու, բայց պահագանները նրան հարածեցին, սակայն նա չը հեռացաւ պալատի մօտից և սկսեց սպասել, թէ կը տեսնէ՞ արդեօք խալիֆային զբօսանքի զնալիս: Արեգակը նրան այրում էր, քամին փչում էր և տաք տաքը ~~անընդ~~ լսում նրա երեսին: Բայց վճռեց հեռանալ պալատի դռներից միայն նրա համար, որ հարևան անտից ոչորմութիւն ուզէ: Նրան ջուր և հացի փշրանքներ տուին:

Վերջապէս չորրորդ օրը նա իմացաւ պահագաններից, որ խալիֆան այդ օրը պատրաստուում է բազէի որս գնալ: Ահա դռները բաց արին և որսական խումբը դուրս եկաւ գեղեցիկ ձիաների վրայ նստած: Ինքը Խալիֆան նստած էր մի հիանալի սպիտակ ձիու վրայ և ձեռքին ունէր մի գեղեցիկ բազէ: Երբ նա երևաց պալատի դռների մօտ, այնտեղի բոլոր



կանգնածները և փողոցով անցնողները ընկան գետին և ողջունեցին նրան: Զաֆարը նոյնպէս չքեց, ողջունեց նրան և տեղը կանգնելով, արտասուքի ձայնով սկսեց խնդրել նրան:

— Լսի՛ր ինձ, ողորմած Խալիֆա:

Բայց Խալիֆան գործ չունէր մուրացկանների հետ: Նա անցաւ զնաց: Պահապան գինուորը ասաց Զաֆարին.

— Սպասիր, երբ որսից կը դառնայ, այն ժամանակ կասես, եթէ յաջող կը լինի որսը, խալիֆան ողորմած կը լինի, իսկ եթէ ոչ, ոչինչ մի սպասիր: Զաֆարը կանգնած սպասում էր: Հէնց որ նկատեց հեռուից Խալիֆայի որսական խումբը, նա առաջ անցաւ և սպասեց Խալիֆայի մօտենալուն: Երբ Խալիֆայի ձին հասաւ իր գէմը, նա չոքեց և բարձրը ձայնով սկսեց խնդրել, որ Խալիֆան իրենը սէ: Խալիֆան ձին կանգնեցրեց և հարցրեց.

— Ի՞նչ է ուզում այդ մուրացկանը:

— Մեծ Խալիֆայ, ասաց Զաֆարը, — Աստուած քո սիրտը ողորմութիւնով լցնէ: Լսիր ողորմելի ստրուկիս խնդիրքը, որի կեանքը քո ձեռքին է:

— Ո՞վ էս դու, հարցրեց Խալիֆան:

— Ես եկել եմ քո ձեռքով կործանած Մօսուլ քաղաքից: Քեզ մօտ հիւժում է Նուրէդդինը, Մահմէդ Ալիի որդին: Մտածիր, Խալիֆայ, քո ինչին է պէտք այդ հանդարտ և թոյլ արարածը: Խղձս՝ նրո

խեղճ կոյր հօրը, ազատ թողիր Նուրէդդինին:

— Ի՞նչ պէս ես համարձակուում անհանգստացնել ինձ այդպիսի դատարկ խօսքերով անբաւական ձայնով ընդ հասեց նրա խօսքը Խալիֆան: — Գերիներին ձրիաբար չեն արձակում: Թող ծերունին ուղարկէ ինձ մօտ մի խելօք դեսպան և հարուստ փրկանք, այն ժամանակ ես կը լսեմ նրա խնդիրքը:

Եւ յօնքերը կիտելով Խալիֆան կամենում էր դէպի առաջ շարժուել, բայց Զաֆարը աւելի ազիտորմ ձայնով կանչեց.

— Լսի՛ր, Խալիֆայ մինչև վերջը: Մերունի Մահմէդ Ալիի բոլոր ունեցածը քո արած կռիւների ժամանակ փչացրել են. նա ոչինչ չունի տալու իր որդուն ազատելու համար: Ես եկել եմ քեզ առաջարկելու փրկանքի փոխարէն նրա միւս որդուն, Զաֆարին:

— Զաֆարին, բացականչեց Խալիֆան, — Իմ հօր կատաղի թշնամուն, որ այնքան վնաս է տուել մեր տէրութեանը: Օ՛, եթէ նա իմ ձեռքին լինէր, ճշմարիտ եմ ասում, ես առանց մտածելու, կը փօխէի գերիներից մէկի հետ — որն որ ուզում է թող լինի:

— Աստուած է վկայ, Զաֆարը քո գերին կը լինի հէնց այն օրը, երբ Նուրէդդինը կազատուի, — ասաց Զաֆարը:

— Տուր ինձ նրան շուտով և ես քեզ կը հաւատամ, — ասաց Խալիֆան: Մի քանի րոպէ Զաֆարը տատանուեց, բայց յետոյ սրտապնդուելով և համար-



ձակ նայելով Խալիֆային ասաց վճռական ձայնով:  
— Վերցրու ինձ, Զաֆարը քո առաջն է:

Շրջապատուած ամբոխը Զաֆարի ներկայու-  
թիւնը տեսնելով, մի քայլ յետ քաշուեց ապուշ  
կտրածի պէս:

Խալիֆան ներսից անթարթ աչքերով նայում էր  
զզողուած մուրացկանին, աշխատելով ճանաչել իր  
վաղեօի նշանաւոր հակառակորդին:

Մի՞թէ սա է և ինչպէ՞ս իմանալ ճշմարիտը. երև-  
ում էր, որ նա մտածում էր և աչքերը չէր հեռաց-  
նում հերոսից:

— Եթէ այդպէս է, այն ժամանակ դու համարձակ  
ես, — ասաց վերջապէս խալիֆան: Եթէ հրամայեմ  
քեզ այժմ նստացնեն երկաթէ ձողերի վրայ, քո եղ-  
բօրն էլ բաց չը թողնեմ, ինչ պիտի անես, — հարց-  
րեց Խալիֆան ծիծաղելով:

— Ես քո ձեռքիդ եմ, երկրի մեծ հրամայող, —  
պատասխանեց հանդիստ ձայնով Զաֆարը. — Թէպէտ  
ես եկել եմ քո երկիրը ոչ իբրև թշնամի, այլ մի  
անդէն պանդուխտ, բայց իմ անձը քո ձեռքն եմ  
տալիս. արա՛ ինձ, ինչ որ կամենում ես, միայն եղ-  
բօրս արձակիր: Նա անմեղ է, երբէք նա ձեռք չէ  
տուել քո զինուորներից մէկին. խղճի՛ս նրան: Ո,  
Խալիֆա, Աստուած չի թողլ տար որ իմ խնդիրքին  
ճուռ աչքով նայես: Ես իմ անձը քեզ եմ տուել, յոյս  
ունենալով քո ողորմած և ներողամիտ աչքով վերա-

բերելուն դէպի իմ եղբայրը:

Խալիֆան լսում էր նրան յօնքերը կիտած: Զա-  
ֆարի համարձակութիւնը և մեծահոգութիւնը նրա  
մարմինը կարծես ծակոտեցին: Նա մի վայրկեան  
մտքի տակ ընկաւ, յետոյ բարձրացրեց զըւիւր և  
ասաց.

— Լաւ, վաղը կը տեսնենք. իսկ այժմ տարէք  
դրան, — դարձաւ նա ծառաներին, ասոց և մտաւ  
պալատի դռներով:  
Զաֆարին կապեցին և տարան բանար:

Թ.

Միւս օրը Խալիֆան կամեցաւ ստոյգը համոզուել,  
թէ արդեօք ճշմարիտ է, որ երեկուայ մուրացկանը  
Նուրէդդինի եղբայրն է և հրամայեց բերել միա-  
սին երկու եղբայրներին իր առաջը: Միմեանց տես-  
նելով եղբայրները հեկեկալով իրար փաթաթուեցան:

— Զաֆա՛ւր, Զաֆա՛ւր, դու էլ ես այստեղ. — հար-  
ցրեց Նուրէդդինը:

Զաֆարը սիրտ չարաւ յայտնել եղբօրը, թէ ինչն  
է նրան այստեղ գցել: Նա միայն ասաց.

— Մեր խեղճ հայրը և կինդ, սիրելի եղբայր, քո  
կարօտը շատ են քաշում: Տէնց նոյն օրը Խալիֆան  
հրաման հանեց, որ Նուրէդդինին արձակեն, իսկ



Չափարին ամուր բանտի մէջ պահին: Նուրէղդինը դուրս եկաւ բանտից, օրհնելով Աստուծուն և չիմանալով, թէ ինչին վերագրէ Խալիֆայի ողորմածութիւնը. միայն անցնելով քաղաքի միջով ճանապարհի համար ողորմութիւն հաւաքելու, հասկացաւ, թէ ինչ թանգ զնով է ձեռք բերել իր աղատութիւնը: Նա իսկոյն վաղեց բանտի դռների մօտ և հարց ու փորձ արեց պահապաններին: Նրանք հաստատեցին նրա բոլոր լրացումները: Այն ժամանակ նա սկսեց լաց լինել և յուսահատ իր գլուխը ծծել: Նա թուաւ բանտի վերակացուի մօտ և աղաչեց նրան, որ խնդրէ Խալիֆային իր վճիռը փոխելու: Նրան պատասխանեցին, որ Խալիֆան կատարում է իր խոստումը, որ արել է իր հօրը մեռնելուց առաջ վրէժ հանել Չափարից, որ նա, ողորմած Խալիֆան, յարգելով Չափարի արիութիւնը և վեհանախութիւնը խոստանում է չը պատժել իր երկրի թշնամուն, միայն թէ նա գերութիւնից փախչելու փորձ չանէ: Խղձաց բանտի վերակացուն Նուրէղդինի անմխիթար դրութեան վրայ, թոյլ տուեց նրան մտք բարև ասելու իր եղբորը: Վերջին տեսակցութեան միջոցին Նուրէղդինը դառնազին հեկեկում էր, իսկ Չափարը հանգիստ էր և ասաց նրան հեռանալու ժամանակ.

— Ինչ, Աստուած քեզ հետ, սիրելի՛ եղբայր Ասա հօրս, որ Աստուած ինձ ոյժ և կարողութիւն

տուեց այս բանն անելու: Իմ խիղճը հանգիստ կը լինի միայն այն ժամանակ, երբ դու կը մխիթարես հօրս և ընտանիքի՞ք. քո վերագառնալովը: Հաւատա՛, որ ինձ բախտաւոր եմ զգում նրանով, ինչ որ արել եմ: Թող օրհնէ Աստուած քո զնալու ճանապարհը: Պինդ փաթաթուելով միմեանց եղբայրները բաժանուեցան:

Ժ.

Նուրէղդինը դարձեալ իր հայրենի քաղաքում է, ուր այլ ևս վերագառնալու յոյս չունէր: Ոյժերը սպառուած, թուլացած նա զօռով հասաւ մինչև քաղաքի հրապարակը և այնտեղ խմբուած ամբուխի առաջ ուշաթափ ընկաւ: Ամենքը իսկոյն նրան ճանաչեցին: Ուրախ ձայներով վազեցին մարդիկ դէպի զանազան կողմեր ծերունի Մահմէդ Ալին գտնելու, որ յայտնեն նրան այդ ուրախառիթ լուրը: Ծերունին այդ ժամանակ ման էր դալիս քաղաքում Նուրէղդինի կնոջ հետ և ողորմութիւն էր հաւաքում:

Շտապելով իր որդու մօտ, ծերունին դողդողալով քայլում էր, հազիւ հասնելով Արֆայիմի ետևից, որ շտապում էր անտնել իր մարդուն: Սրտաշարժ և ուրախալի էր նրանց տեսակցութիւնը վերագարձած




գերու հետ:


Տեղեկանույթ Զաֆարի վարմունքի մասին, Մահմեդ Ալին արտասուտալի աչքերը երկինք բարձրացրեց և Աստուծուն շորհակալութիւններ ուղարկեց:

— Ո՛վ իմ որդեակ, իմ Զաֆար, ինչքա՛ն կուզէի սեղմել քեզ կրծքիս: Այժմ, միայն այժմ, դու Մ Ե Ծ մարդու անուն սաացար, դու այդ արեցիր ուրիշ ների համար քո անձը մոռանալով:

Արդեօք Զաֆարը գերութիւնից վերադարձա՞ւ, թէ բանախ մէջ մեռաւ, այդ մասին ժողովրդական աւանդութիւնը զանազան տեսակ է խօսում: Բայց նրա գործած անձնութեան և քաջութեան պատմութիւնը դեռ վառ է ժողովրդի յիշողութեան մէջ մինչև այսօր և միշտ էլ կը մնայ իբրև կենդանի օրինակ անձնազոհութեան և սիրոյ:









ՄՄ Հայագիտական գրադարան



MAL008742



